Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց հինգ բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Վարդենիս-Սոտք-Քարավաճառ խաչմերուկ հատվածի կառուցման նախագծի փորձաքննություն» օժանդակ ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Եպիսկոպոսական ժողովի կազմակերպում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջապահական կրթական նյութերի տպագրում» և «Արագածոտնի մարզի Թալին քաղաքում մանկական զբոսայգու կառուցում» ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տանիքի վերա-նորոգում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: